խաչարձան կանգնեց վերան. մի ոտանաւոր գրեց և մեկնեցաւ։ Մի տարի սուգ պահեց, կասեն, նաև որպէս սուգի սկիզբն ի Քարձոր՝ նոյնպէս վերջն պատարագ և մատաղ անել տուած է Ջաքէի հոգւոյ համար, ապա սկսած է դարձեալ սաղ ածել։

Ջաքէի յաղթ խաչարձանն այս օր քրդեր տապալած են. դիւրին տանելու համար երկու կտոր արած կէսը տարած են, միւս մի մեծ մասն դեռ հողի մէջ հաստատուած է, մնացած քանի կարգ գրերն անընթեռնելի վիճակի մէջ են։

Խրիցու գիւղից մի ժամ յարևելս Ֆէրան քրդաբնակ գիւղն է 30 տնուոր, ուղղակի դաշտի միջավայրը, 1 ժամ Ամատ գիւղի հարաւն 1 ժամ ևս Խրժրք Դաւոյի հարաւն,

1880 թուականին կային այս գիւղը քանի տուն հայեր ողբ բռնութեան չը կարենալով տոկալ՝ թողին տուն և տեղ, հեռեցան։

4. ՀԻԶԱՆ։

Քարձորից ի Գարա-Քիլիսէ գնալու ճանապարհին վերայ կայ Հիզան քրդաբնակ գիւղն 20 տուն բնակչաք, 1 ժամ յարևելս է Քարձորի և 1 ժամ արևմուտս Գարա-Քիլիսէի։

Այս գիւղը շինուած է Խրժրք Դաւոյի բարձանց հիւսիսային երեսի վերայ։

Հիզանի $^3/_4$ ժամ արևելեան հիւսիս Հաճի Սաֆար գիւղն, որ $^1/_4$ ժամ արևմտեան հարաւ Աշխալի գիւղից։